

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

May 1941

Chumash Springs



1932




31 AUG 2007

9(47.925)

U-23

(բ) Կ. Կ. Կ ԿՈՒՄԱՏՍՈՒՔՎԱՆ Ի ԵՍՏՏՈՒՏ

# ՄԱՅԻՍԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ





n 1 SEP 2011

9(47.325)

Ա-23

Հ. Կ. (բ) 4. 4. 4. ԿՈՒՄԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

# ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Ա Յ Լ Բ Ո Ս

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ Կ. ՂԱԶԱՐՅԱՆԻ

364

||

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ • ԳԵՂՀՐԱՏԲԱԺԻՆ  
ՅԵՐԵՎԱՆ ★ 1932

ՀՀ

Պատ. խմբ. ՅԵ. Զարենց  
Տեխնիկ. խմբ. Տ. Խաչվանիս  
Պուրքական հիմքներ  
Դրառաս Ղարիբյանի



(24998-61)

9/30321-61

## ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊԱՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մինչև Հայաստանի խորհրդայնացումը (1920 թ. նոյեմբերի 29-ը), Անդրկովկասն անջատված եր հեղափոխական Ռուսաստանից, բաղկացած էրեք «անկախ» պետություններից՝ Վրաստան, Աղրբեջան, Հայաստան և լնունում եր համաշխարհային պատերազմում հաղթանակ տարած իմակարիալիստական պետությունների խմբավորման՝ Անտանտայի (Անգլիայի, Ֆրանսիայի, ինչպես և Հ. Ա. Մ. Ն.) քաղաքականությունը: Սակայն քանի ուսու Գերմանիան և Թյուրքիան ուժեղ ելին և հաջողությամբ կռվում ելին Անգլո-ֆրանսիական խմբավորման դիմ, Անդրկովկասի «անկախ» պետությունները նրանց հովանավորությունն ելին վայելում, բայց իերը այս խմբավորումը պարտվեց, նրանք ընդունեցին Անտանտայի մանդամը՝ Անգլիայի, Ֆրանսիայի, ինչպես և Ամերիկայի: Իմակարիալիստական պետություններին հարելու պահանջը բղխում եր Անդրկովկասի նորածին բուժուական պետությունների դասակարգային բնույթից, ինչպես և Անտանտայի կողմից առաջադրված պահանջից՝ նույն պետությունների նկատմամբ:

1918 թ. մայիսի 26-ին իրեն ցրված հայտարարեց Անդրկովկասյան Սեկրետարիատին հայ հականեղափոխական, հակապրոլետարական կուսակցությունները Հայաստանն անջատված հայտարարեցին Ռուսաստանից և «անկախ» պետականության հիմքը դրին: Վերոհիշյալ կուսակցություններից բաղկացած Թիֆլիսի Ազգային Խորհուրդը տեղափոխվեց Յերևան և կառավարության Փունկցիան իր վրա վերցրեց: Այսպիսով՝ նախկին Յերեւան նահանգը՝ Հայաստանը կտրվեց հեղափոխական Ռուսաստանից, ինչպես և հարևան բուժուատ-կալվածության պետություններից՝ Աղրբեջանից, ընդունեց Անտանտային անմիջական զեկավարությունը և կազմակերպվեց վորպես բուժուական իշխանություն:

Դաշնակցությունը, միացած հայ միուս կուսակցություններին, Հայաստանը դարձրեց այն վայրը, վարն Անդրկովկասյան բուժուական միուս հանրապետությունների հետ միասին, բայց և կոլխազարձ թշնամական և հարձակողական ու վոչնչացման ուղիով՝ բազա պիտի ծառայեր իմակարիալիստական պետությունների համար Խորհրդային Ռուսաստանը խորտակելու գործում: Այդ հիմնական նպատակի հիմ միասին՝ Անտանտան ծրագրում եր կասեցնել հեղափոխական շարժումներն Անդրկովկասում, վոր մեծ արագությամբ սկսում եր ընդդրկել ավելի լայն շրջանները, անցնել բոլոր հարևան արևելյան յերկրները, և այսպիսով՝ Անտանտային լինթակա գաղութային յերկրների և բոլշևիկյան Ռուսաստանի միջև պատճեց կազմել հանձին Անդրկովկասյան նորածին պետությունների: Անտանտան ծրագրում

եր՝ ելի նույն նպատակից յեւելով՝ նույնպիսի պատճել դարձնել միջին Ասիան և ընդհանրապիս բոլոր ծալրամասերը, վորով, նրանց կարծիքով, հնարավորություն և առաջ գալիս հեղափոխական Սրեւերի և Սրեւուտքի շարժումները ջլատել և ամրացնել կապիտալիստական պիտությունների իշխանությունն այդ վայրերում։ Սակայն ինչպիս պատմությունը ցույց տըվեց, այդ պատճենները մեծ մասամբ խորտակվեցին և նրանց տեղ կազմակերպիցին խորհրդային իշխանություններ և Սրեւլան յերկրներն ավելի ու ավելի ընդդրկվեցին կոմունիստական շարժումների մեջ։

Այդ նպատակներն ունենալով, սկզբում Անգլիան, հետագայում Ամերիկան մուտք են գործում Հայաստան, Խանակում հն կառավարիչներ, վորպես «Ազգերի Վեհաժողովի ներկայացուցիչ», ամեն կերպ աջակցում են Դաշնակցության իր պետականությունն ամրացնելու, նվաճողական քաղաքականությունն իրագործելու համար մեծ բանակ կազմելու, միաժամանակ գտնեցնելով միմիանց գեր Անդրկովկասյան նորածին պիտությունները, թուլացնելու նրանց, Անդրկովկասը վերջնականապիս անհեքսիայի յենթարկելու համար, հատկապիս Բագու և Բաթում կետերը գրավելու։

Ուսենալով իմակերիալիստական պիտությունների ֆինանսական, նյութական, զինվորական-ռազմական աջակցությունը, Դաշնակցությունը Հայաստանում անխախտ պահեց ցարական վարչատեսական կյանքը, ուժեղացրեց բանվոր զասակարգի և գյուղացիության շահագործումը, վորոնանասելի չափերի հասավ հատկապիս 1920 թ. նախորեյին Յարիգմն ընկնելուց հետո Դաշնակցությունն իր հովանավորության տակ վերցրեց հայ աղովակալվածատիրական դասին, ձգտեց Հայաստան տեղափոխել անդրկովկասյան և արտասահմանան հայ կապիտալները, իրեն խնամատարամանդայոր Ամերիկային հանձնել մի շարք կոնցեսիաներ և այսպիսով կազմակերպել «մեծ, անկախ, միացյալ, ծովից ծով Հայաստան» (Սհ.Միջերկրական հետագայում նայե կասպից ծովերը)։

Սակայն խորհրդային Ռուսաստանի հաջողությունները ներքին և արտաքին թշնամիների դեմ, բանվորական և գյուղացիական հարցերի լուծումը, սոցիալիստական հասարակարգի կառուցումը, Սրեւերի և Սրեւուտքի մի շարք յերկրների բռնկումը կոմունիստական շարժումներով և ապստամբություններով, իրենց հերթին հեղափոխականացնում ելին ամրող Անդրկովկասում հասարակապիս Հայաստանի բանվոր զասակարգը և գյուղացիությունը, կազմակերպվում, բոլշևիկյան զաղափարներով դաստիարակվում եր Հայաստանի բանվոր զասակարգն ու աշխատավոր գյուղացիությունը, իր հերթին ուժեղանում եր կոմունիստական պրոպագանդան ու ազիտացիան, կազմակերպվում ելին կուս. բջիջներ, պրոֆմիություններին կից Փրակցիաներ, կուս, կոմիտեներ, գաղտնի ղենված գվարդիաներ, ուժեր, հրատարակվում եր անկեղալ մասուլ, ուժեղանում եր կապը Անդրկովկասի բանվորական, բոլշևիկյան կենտրոնների և սոցիալիստական Ռուսաստանի հետ։

Մասս սների հեղափոխականացման ակտիվ արտահայտությունները Հա-

յաստանում ավելի ու ավելի ուժեղանում են մասավանդ 1920 թվին՝ ընդգրկումը բջիջների՝ ֆրակցիաների մեջ, գործադուլներ, միտինգներ և այլն։ Այդ հեղափոխականացման հետևանքն ելին 1920 թ. բոլշևիկյան շարժումներ, ի վերելքը նույն թվի մայիսի 1-ի միջազգալին տոնի կատարման աննախընթաց հաջողությունը։

Նույն թվին Ադրբեջանը խորհրդայնացավ, նրա անմիջական աջակցությունը Հայաստանի հեղափոխական մասսային միանդամայն ունալ և ավելի գործնական դարձավ։ Այս բոլորի հետևանքն է 1920 թ. մայիսի մի շարք եկույթները, բոլշևիկյան ապստամբությունները, վորոնք ընդգրկեցին Հայաստանի համարյա բոլոր կարեոր վայրերը՝ Լենինականը, Դիլիջան-Իջևանը, Նոր-Բայազեղը, Ղարսը և այլն։

1920 թ. Մայիս ամսվա շարժումները Հայաստանում, ապստամբական շարժումները, բոլշևիկյան մասսայական հեղափոխական իելույթներ ելին, վորոնք ընդգրկեցին Հայաստանի բանվորական և աշխատավոր գյուղական բոլոր կարեոր կենտրոնները։

Մայիսան ապստամբությունները բանվորագուղացիական ելին։ Շարժման մեջ հեգեմոն դեր եր խաղում բանվոր դասակարգը, ղեկավարությունը ունենալով կոմունիստական (Բոլշևիկյան) կուսակցությունը։

Այդ շարժումների նպատակն եր՝ խորտակել զանակցական-կապիտալիստական ուժիմը, դուրս քշել Հայաստանից իմակերիալիստական պետությունների աղենուններին, հաստատել խորհրդային սոցիալիստական կարգեր, հարևան խորհրդային հանրապետությունների հետ միասին, ֆեղերատիվ հոգուներով միանալ խորհրդային Ռուսաստանին։

Ապստամբ բանվորներն ու գյուղացիները գրավեցին Ալեքսանդրապոլը, Ղարսը, Սարիղամիշը, Դիլիջանը, Իջևանը Զանգեզուրի մի քանի վայրերը, Նոր-Բայազեղը, Իշխանության գլուխն անցան հեղափոխական կոմիտեները, վորոնք բաղկացած ելին ճնշող մեծամասնությամբ կոմունիստական կուսակցության անդամներից, անմիջական ղեկավարությամբ տեղական կազմակերպությունների և կոմիտեների, ըգհանուր ղեկավարությամբ թյունների՝ բջիջների, Կենտկոմի (Արմենկոմի), վորի կենտրոնն եր Յերևանը։ Թյամբ Հ. Կ. կենտկոմի կոմիտեների վորի կենտրոնն եր Յերևանը։

Յերը ծագեցին ապստամբությունները, զանակցական կառավարությունն անմիջական աջակցություն ստացավ Անդրկովկայից և Սմերիկայից, առանցորդերի և կուսակցության անդամների մորիկեղացիա կատարեց, առանձին ջոկատներ կազմակերպեց և խմբավետների ղեկավարությամբ ուղարկեց ջոկատների կազմակերպեց և դրամասների գործող զորամասներից աչքի ընկավ Լենինականի դեմ ուղարկված Սեպուհի ջոկատը, վորի ողիրատիվ գործողությունները կատարեցին յերկու գերիշտում ելին ցարական իերերական կապերը և ազգագովը և Հախման վերգովը։ Ճնշման գործում նա իր գաֆանությամբ առանձնապես աչքի ընկավ վերգովը։

Առաջինն ընկավ Լենինականը, հետո, Ղարսը, Սարիղամիշը, ավելի ուշ լիսի վերջին և հունիսի սկզբին արգեն ապստամբությունները ճնշվել ելին,

սակայն չելին դադարել առանձին յելութները և մասսաների հեղափոխական շաբաթումները:

Մալիսան շաբաթումները ճնշվեցին, սակայն բոլցեկելան պլուզագանդը, մասսաների կաղմակերպումը, հեղափոխական շարժումները չդադարեցին: Իշխանությունը գրավելու միտքը չեր կորցրել իր սրությունը: Հայաստանի խորհրդայնացման անխուսափելիությունը գիտակցում ելին բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության լավագույն շերտերը: Հեղափոխությունը չմեռավ, նա ավելի լայն, ծավալուն, մասսականորեն տեղի պիտի ունենար:

Ունենալով այսպիսի խոր գիտակցություն և ընբռնում դեպքերի դարդացման վերաբերյալ, կոմունիստական կուսակցությունն ուժեղացրեց ընդհատակա աշխատանքները:

Ճիշտ ե, մայիսյան ապստամբությունների ճնշումից հետո կուսակցական մարմինները մի պահ շփոթվեցին, սակայն շուտով կարողացան վերադասավորել վերակառուցել իրենց աշխատանքները, նոր աշխատակիցներով հարստացնել իրենց կաղմակերպությունները, վորի հետևանքը յեղավ կուսակցական կաղմակերպությունների քանակական և վորակական աճումը, ավելի լայն մասսաների ընդգրկումը կուս. կաղմակերպությունների և հեղափոխական շարժումների մեջ:

Դաշնակցական կառավարությունը ապստամբությունների ճնշման և իր «հաղթանակի» մասին անմիջապես հայտնեց Յեվրոպական պետությունների ներկայացուցիչներին, Վրաստանի և Աղբեջանի կառավարություններին, նպատակ ունենալով, վորպես հեղափոխության դիմ կովոլ պետություն հեղինակություն ձեռք բերել. Հայաստանի անկախության ճանաչման գործը շարունակել և չթուլացնել իր կապը կապիտալիստական պետությունների հետ, Խորհրդային Ռուսաստանի և Խորհրդայնացող Աղբեջանի գեմ կովի գործը շարունակել:

Դաշնակցությունը գաժանությամբ ճնշեց մայիսյան ապստամբությունները: Արմատախիլ անելու համար բոլցեկելան շաբաթումները և ջլատելու համար բոլցեկելան կաղմակերպությունները, նա ձեռնարկեց մի դաժան դոլձ՝ կաղմակերպեց արտակարգ դատարաններ (արիբունալներ), եկղեկուցիաներ բաղմաթիվ ձերբակալություններ, բանտարկություններ, գնդականարություններ կատարեց, կոմունիստներ վորսալու համար պրովակատորների լայն ցանց հաստատեց:

Ամենազաժան գործը կատարեցին արտակարգ դատարանները: Դատարաններ կաղմակերպվեցին համարյա բոլոր ապստամբական կենորոններում: Դատարանների նպատակն իր ձերբակալված բոլցեկեներին, ապստամբությունների մասնակիցներին դատի հանձնել ու սահմանել պատիժ: Սակայն այդ ամբողջ դատավարությունը ձևականություն և ծաղր եր բանվորության եղուղացիության հասցեին: Ըստ ելության վոչ մի դատական գործ տեղի չեր ունենում, ձերբակալվածները նախորդուք զարգանարար ծեծվում են:

Ճեծ մասամբ գնդականարվում: Զերբակալվածների մեծ մասն առանց դատա-

կան գործողությունների յենթարկվեց պատժի:

Դաշնակցական կուսակցությունը մինչև հիմա յել պնդում ե, վոր ձերբակալվածների և պատժի յենթարկվածների քանակը հաստ ու կենաց յեղել: Սակայն հենց նույն դաշնակցական մամուլը, արխիվալին տվյալները առատ նյութ են տալիս ժմտելու: համար վերոնիշցալ միտքը: Հնարավոր չեղագալ կաղմել ձերբակալվածների և սպանվածների ընդհանուրը ցուցակը: Մենք կարող ենք զոհերի թիվը մի քանի հարցուրի հասցնել: Զերբակալվածների կարող ենք զոհերի թիվը մի քանի հարցուրի հասցնել: Զերբակալվածների մասը անասելի պատիժների յենթարկվելով մահացավ, միուրս մասը՝ առ

սորվեց Հայաստանի սահմաններից գուրս, յերրորդ մասը, վորը բաղկացած

եր ապստամբության ղեկավարներից՝ զաղտնի գնդականարվեց. այսպիսու

կնդականարվեցին Մուսայելյանը, Սարուխանյանը, Ղարիբջանյանը, Ղու-

կասյանը, Մկրտումյանը և շատ շատերը:

Սպանությունները և գաղտնի գնդականարվաներն այն աստիճանի

մասսավական դարձան, հատկապես մայիսյան ապստամբությունների ճնշում-

ներից հետո, վոր մի շարք տեղական, ինչպես և յերկրագիտն կաղմակեր-

պություններ, Վրաստանի, Աղբեջանի կոմունիստական կուսակցա-

կան և հասարակական կաղմակերպությունները բողոքի բանաձեկը ըն-

դունեցին և կոչեր հատարակեցին այդ մասին: Բողոքի նոտա ուղարկեց

Հայաստանի կառավարության նաև Ռուսաստանի Սրտաքին գործոց Կոմի-

սարիատը, ընկ. Զիշերինի ստորագրությամբ: Դաշնակցական կառավարու-

թյունը մի կողմից պատասխան և ուղարկում ընկ. Զիշերինին, վոր սպա-

նություններ տեղի չեն ունեցել, մուս կողմից՝ նա շարունակում եր գաղտ-

նի սպանությունները: Այսպես, ափաշկարա կերպով, դաշնակցական կա-

ռավարությունը ժմտում և խարում ե, վոր Մուսայելյանը և մուսները

չեն գնդականարվել մինչդեռ այդ արգեն տեղի յեր ունեցած: Աղբեջանի

Արտաքին գործոց կոմիսար ընկ. Հուսեինովին՝ Հայաստանի դաշնակցական

կառավարություն՝ նույնպիսի բացասական պատասխան և տալիս նրա

բողոքին և հարցումին, ինչպիսի պատասխան տվել եր ընկ. Զիշերինին:

Սակայն ձերբակալությունները և գնդականարությունները չժողովացրին-

հեղափոխական մասսաների հնատուգիտական կուսակցիան կուսակցու-

թյան կաղմակերպությունների ընդհանուրակյա, հեղափոխական աշխատանք-

ները: Զոհերը շատ ելին, սակայն միաժամանակ մարտականորեն՝ կոռու-

կոփիում և կաղմակերպում ելին տեղական կուս. կաղմակերպությունները:

Զոհերի այդքան մեծ թիվը չժողովացրեց բոլցեկյան կաղմակերպությունները:

Ընկածների փոխարեն առաջ լեկան նորերը, վորոնք կարողացան ել ավելի

ուժեղացնել բոլցեկյան աշխատանքը և ճանապարհ հարթել նոյեմբերյան


հեղափոխության համար:




ԱՐՓԻՆ ԱԼԼԱԶՎԵՐԴՅԱՆ (ԱՏԵՈՊԱ)



ՀԱԳՅԱՆԻ ՍԱՐՈՒԹԱՆՅԱՆ



ՀՈՒԿԱՍ ՀՈՒԿԱՍԻՆ




ՅԵՆՈ ՄԿՐՏՉԻԿՅԱՆ





ԱՆԵԼԱՑԱՆԱՍ ԱՐԴԻՎՈՐ



ԱԼԵԳՐԵՑԵԿ ԿԱՍԻԼԵ ԿԱՍԻԼԵԿԻ



ԲԱԳՐԱՏ ՂԱՐԻԲՅԱՆ



269 UPAHAN



ԲԱԴԻԿ ԲԱԴԻԿՅԱՆ



ԱՆԻ ԵՐԵՄԱԿ ԱՌԱՄՎՈՐ




ԱՐՑԱԼՈՒՅՍ ՓԱՆՅԱ



Մայիսմելյան միտինգի վայրը Ալեքսանդրապոլում Գավկործկոմի ներկա շենքը Լենինականում։  
Այսուղ, 1920 թ. մայիսի մեջին, այս շենքի ձախ կողմի հրապարակում, տեղի ունեցավ միտինգ,  
ուր կոմունիստների յելույթներից հետո ընդունվեց վողայքի բանահեղ Խորհրդային Ադրբեյչանի  
կառավարության անունով։




Յերկաքուղային դեղին արևմիաւրյան վարչության շենքը (ձախից) Ալեքսանդրապոլում, ուր 1920 թ.  
մայիսի մեջին ցուցարարների քափորք կոմունիստների դեկավարությամբ կայարանից խաղաք շարժ-  
վելիս ընդեարվում ե դաշնակցականների հետ, վորի ժամանակ բանվորները ծեծի յեն յենքարկում  
մի ժամ դաշնակների յել լոլում նրանց ձեռքից գծի սպասարկության արհմիաւրյան դրոշակը։




Դաշնակցության ակումբի շենքը Ալեքսանդրապոլում 1919 — 20 թ. թ. Այստեղ, 1920 թ. մայիսի մեջին ցուցաբերվեց կոմունիստների դեկավարությամբ խիստ սուր ընդհարվում են դաշնակցների հետ, ներս խուժում դաշնակցության ակումբը յիշ ավերում այս:




Քավառության գյուղը (Լենինականի շրջանում), որ 1920 թ. մայիսի տեղի ունեցան ցույցեր յիշ ընդհարումներ, կոխներ դաշնակցական քանդակների հետ:



Ուկս զլուի կամուրջը (Պազալս — Խնձվանի շրջանում): Այստեղ 1920 թ. հունիսին տեղի ունեցան ոժեղ բաղաքացի սկան կոխներ, վրանցում ապստամբները հանդիս հերոսական պայքարի պայծառ եշեր: Այստեղ՝ հենց այս կամուրջի վրա ապստամբները կարողացան վաշնացների ցական բանդաներին, վրանց կովում եյին խմբապետ Մուրադի զիխավորությամբ:



Դաշնակցության Ցերեվանի բանտի այն կամերան, վորտեղ բանտարկված եյին թ. թ. Ալլահվերդ- յանը, Մուսայելյանը. Ղարիբչանյանը յիշ վորտեղից նրանց ոգոսոսի 14-ի գիշերը դուրս տարան գնդակահարելու:



Այսուղի՝ Յերեվանից Քամամեն տանը խնուզու շրջակայքում, Քամամենի տակ մի ամսյի վայրում 1920 թ. ոգոստոսի 14-ի գիշերը դաշնակ դահիճների ձեռքով զնդակահարվեցին հերոս Ընկերության Սովորական Ալլահիերոգյանը, Սարգիս Մուսաելյանը յիշ բացրատ Դարիքչանյանը:



Այն վայրը՝ (Սլեքառնդրապոլ հաղափից դուրս հրեական գերեզմանոցի շրջակայքում) ուր 1920 թ. հունիսի 4-ին (հիմն տումարով) դաշնակների ձեռքով գազանարար զնդակահարվեցին ընկերության Յեգոր Սեվյանը, Լենինի Պրիմիսկին յիշ Արշալույս Փանյանը, Գնդակահարությունը անմիջականորեն դեկտիմարում եր նախկին եսեր, արտակարգ դատարանի դատավագ-անդամ դաշնակցական դաեկին բժիշկ Բաղդատար Բաղդատարյանը:



Մայիսի ասլսամբուրյան մօնումենութ Լենինականում  
Գործ ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆԻ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

## ԱԼԼԱՎԵՐԴՅԱՆ Ստեփան (ՍՅՈՒԱ)

Ծնվել է 1889 թվին Քութայիս քաղաքում, չքավոր ընտանիքում:  
Հայոց հայվետար եր, հետո ծառայող մետաքսի գործարանում։ Ծնողները  
չքավորության պատճառով մասձում ելին նրան արհեստի տալ, սակայն,  
Ստյոպան մի կերպ կարողանում է ընդունվել Քութայիսի ռեալական  
դպրոց։

Դիւնես աշակերտության շրջանում (1905-1907 թ. թ.) Ստյոպան սոց-  
դեմ. բան. կուսակցության ուսանողական խմբակներում եք աշխատում և աշա-  
կերտության մեջ համարձակ ու խիզախ հեղափոխական աշխատանք եր-  
տանում։

Քութայիսի ռեալական դպրոցը վերջացնելուց հետո, Ստյոպան մտնում  
է Մոսկվայի Առևտրական ինստիտուտը, զորն ավարտում է 1914 թվին։

Մոսկվայում յեղած ժամանակ, Ստյոպան ակտիվ կերպով մասնակցում  
է ուսանողական հեղափոխական շարժումներին։

1915-17 թ. թ. Ստյոպան գործում է Թիֆլիսում, ապա Սարիղամի-  
շում, վորտեղ նա անընդհատ ընդհատական կուսակցական աշխատանք և տա-  
նում։ Հատկապես կատաղի պայքար և մղում ինձերիալիստուկան պատե-  
րազմի հեղինակների և գաշնակցական կաժավորական շարժումների դեմ։  
Մեծ և դժվար եր նրա աշխատանքը Սարիղամիշում կորիվ դաշնակցության  
դեմ, պատգամավորների խորհրդի, մենչեւիների և եսերների դեմ և այլն։

1918 թվին նրան մենք նորից տեսնում ենք Թիֆլիսում՝ կուսակցական  
ակտիվ, յեռանդագին աշխատանքներ տանելիս, վորտեղ միաժամանակ  
քաղաքի ինքնավարության վերահսկիչի պաշտոնն ուներ։ Սակայն վրաց  
«սոցիալիստներ» Ստյոպային շուտով բանտարկում են, գցում Մետեխի բան-  
տը և ապա վորպես «հակասվետական տարրի» բոլցիկի՝ աքսորում են դաշ-  
նակցական «դրախտավայրը»։

Հայաստան գալով և «կզբում վարելով խնամատարության մինիստրու-  
թյան ներկայացուցի պաշտոնը Դուրդուղություն և Սարիղամիշի շրջաններում,  
Ստյոպան միաժամանակ ընդհատակյա կուսակցական աշխատանքներ և  
տանում և շատ շուտով կարողանում ե մի քանի ուրիշ ընկերների հետ միա-  
տանում և շատ շուտով կարողանում ե մի քանի ուրիշ ընկերների հետ միա-  
տանում և մի քանի ուրիշ վրա դնել Հայաստանի կոմկուսի կազմակերպության  
աշխատանքները՝ ստեղծել կազմակերպության նոր ճյուղեր, նոր բջիջներ  
և այլն։

Միաժամանակ Ստյոպան հրապարակական գեկուցումներ և կարդում

գաշնակցության դեմ, քողազերծ և անում գաշնակցության իսկական դեմքը, նրա բուրժուական-ռեալիզմի համար ապահովության ելությունը:

Այսպես որինակ՝ նրա ճառը Ա. Զոհրաբյանի թաղման հանդեսին (թ. Հունվարին), Յերևանի մայիսի 1-ի ցույցերին և այլն, վորպես շահեցուցիչ հարվածներ ելին իջնում դաշնակցության գլխին: Վերջինս շաբունակ մտածում եր և աշխատում ընկ. Ստուպախին «մեջտեղից վերացնելու:

Մայիսան ապստամբության ժամանակ լինելով Արմենկոմի կազմի մեջ՝ նա ղեկավար աշխատանք և տանում: Ապստամբության ճնշումից հետո նա բռնվում է և գցվում բանտ, վորտեղից նա շարունակում է կապ պահպանել դրսի հետ: Սակայն շուտով դաշնակցական դահիճները նրան՝ Մուսայելյանի և Ղարիբջանյանի հետ միասին ողոստուի 14-ին, զիշերը, բանտից դուրս են բերում և տանում դեպի Քանաքեռ, ձանապարհին մի անմարդաբնակ վայրում գնդակահարում են, իսկ զիակներն ալրում:

ԱՐՈՒԵԱՆՑԱՆ ՀՈՎՀԱՆՆԵԼ

Սոր-Բայազեղի մայիսան ապստամբության դեկավարը՝  
կոմունիստական կուսակցության անդամ: Ծնվել է 1882 թվին Նոր-  
Բայազեղում, չքավոր լնտանիքում: Նախնական կրթությունն ստացել է  
Ղազախի գավառի Դախկասման գյուղում, ապա Յերևանի ուսուցչական Մե-  
մինարիայում և ավարտական քննություն ե բոնել Թիֆլիսի Ալեքսանդրյան  
ուսուցչական ինստիտուտում:

1901 թվից սկսած ուսուցչությամբ և պարապել Նոր-Բալագեղում, պյուղերում և Հայաստանի ալ մասերում, իր այդ պաշտոնին զուգընթաց կատարում եր հեղափոխական աշխատանք:

Դաստիարակության մեջ առաջարկության մեջ՝ ՀՀ վարչապետության կողմէն հայտ է դրված մասնակի կողմէն առաջարկության մասին (Հայաստանի Հանրապետության վեհական գործադրության մասին օրենքը՝ 1904-5 թ.-թ. միջքանի ընկերության համար մասնակի կողմէն առաջարկության մասին) կազմակերպեց Նոր-Բայազեղում առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակը:

Իր հեղափոխական աշխատանքների համար Սարուխանյանը հեռացվում է Նոր-Բայազեղից և տեղափոխվում Իգդիր. այստեղից ել նույն պատճառով 1911 թվին անցնում է Կաղզվան, ապա Ղարս։ 1917 թվին Սարուխանյանը Ղարսում քաղաքացին դպրոցի տեսուչ և նշանակվում, բայց իր բոլցելիքան գործունեցության պատճառով հեռացվում է պաշտոնից և արտաքսվում Ղարսից։ Այստեղից նա անցնում է Թիֆլիս և սկսում է այնտեղ ծագվածուն բոլցելիքան աշխատանքներ կատարել, միաժամանակ զբաղվելով տեսական պատրաստությամբ։

Ապահովական պարագաները՝ մի գաղտնի ժողովում նրան առըբազա-  
լում են. մի քանի ամիս բանուում մնալուց հետո նրան հաջողվում ե ազատ-  
վել և նորից անցնել Ղարս: Ղարսից նա անցնում է Դարսալազիազ, ապա գալիս  
և Յերևան և Արմենկոմի կողմից գործուզգում և Նոր-Բայրազեդ, կուսակցա-  
կան աշխատանքներ կատարելու համար: Այստեղ նրան գաշնակցական խըմ-  
բապետ Համազասպը բանտարկում ե, վորից հետո նրան աքսորում են:  
1920 թվի մայիսին նորից գործուզգում և Նոր-Բայրազեդ, այս անգամ ապա-  
տամբությունը կազմակերպելու համար, վորը և նրան հաջողվում ե տեղա-  
կան ընկերների ակտիվ մասնակցությամբ, կազմակերպում և մասսայական  
շաբաթական պահանջման համար գործությունների ու բարբարոսական չարչա-  
ռափում: Ապահովամբության ձնշումից հետո բանտարկումն է Փաշաքենտ գու-  
ղում և անլուր բոնությունների ու բարբարոսական չարչառանքների յեն-  
դում և անլուր բոնությունների ու բարբարոսական չարչառանքների յեն-

## ՀՈՒԿԱՍՅԱՆ ՀՈՒԿԱՍ

**Ա**ռուկաս Հովհաննեսի Ղուկասյանը ծնվել է 1899 թվի մայիսի 20-ին, Յերևանի գավառի Հրազդանի շրջանի Քալարա գյուղում, գերձակի ընտական դպրոցը և ավարտում է 1909 թ.: Այնուհետև յերկու տարի հաճախում է Ալբասնդրյան քաղաքացին դպրոցը, վորոն և ավարտելուց հետո ընդունվում է Յերևանի թեսական դպրոցի առաջին դասարանը: Այստեղ սովորում է մինչեւ 1917 թ., գեռ չափարած դուրս և գալիս 6-րդ դասարանից և իրեն նվիրում է հասարակական քաղաքական աշխատանքներին: Հենց այդ տարբերակին նաև ծանոթանում է մարքսիստական աշխատանքներին: Հովհաննեսի աշխատում է աշխատական Մարքսիստական Միության մեջ:

Ապրելով դաշնակցական դժոխքում, տեսնելով գուշակցական պետականության բոլոր սարսափներն ու արհավիրքները, Ղուկասյանը չնայած վաղ յերիտասարդական հասակին, իրեն ամբողջովին նվիրում է հեղափոխական աշխատանքներին:

Դաշնակցությունն այդ ժամանակ ուներ իր աղղայնական յերիտասարդական կազմակերպությունը: Ղուկասը վճռական պայքարի յե դուրս գալիս դեմ: Զանցած մի վորոշ ժամանակ, Հայաստանի կոմ. կուսակցությունը հիմնում է կոմունիստական Յերիտասարդական Միություն՝ «Սպարակը», վորի հիմնադիրներից ու փայլուն դիկավարներից մեկն և լինում Ղուկասանը, վորն անսպաս ինունդով ու թափով, հեղափոխական մարտիկի վոգեգորոթյամբ, բոլշևիկյան սլովագանդա յեր մղում, պայքարում եր դաշնակցական բուրժուատ-կուլտակալին դիկտատուրան տապալելու: համար:

Ինելով իսկական հեղափոխական մարտիկ ու տաղանդավոր՝ Ղուկասյանը 1918—20 թ. առանց զեթ մի բոպե հուսահատվելու, ընկճվելու, վարում եր հեղափոխական աշխատանք՝ հրատարակելով կոչեր, թուոցիներ, նրանց ցըլով կամ պատերին փակցնելով, Արմենկոմի գաղտնի, կոնսուլտացիոն հանձնարարությունները ճշտությամբ և հաջողությամբ կատարելով, գավառների անեղաղալ կուս. բջիջների հետ գաղանի կապ պահանջնելով և ալն, և ալն:

Հեղափոխական այս աշխատանքներին զուգընթաց, նա լարված աշխատանք եր առանում իր անսական պատրաստության համար, առանձնապես մեծ սիրով զբաղվում եր տիեզերագիտությամբ: 1918 թ. Ղուկասյանին դաշնակցական կառավորությունը զորակուչ յե յեւթարկում և զցում զնդաշըրքությամբ ուսումնասիրում և ուղարկան գործը, քաջ դիտենալով, վոր

1919 թ. վերջին Ղուկասյանը գնում է Թիֆլիս և աշխատում է տեղի կուսակցական կազմակերպության մեջ: Սակայն նա այնտեղ յերկար չի մնում: շուտով վերագառնում է Հայաստան, ուր Արմենկոմը նրան ուղարկում է Ղարս՝ այնտեղի կոմ. կուս. կազմակերպության աշխատանքները դեկավարելու համար: Աննախրնթաց յեւանդով և մոտակա հաղթանակի լի համոզումով՝ նա իրեն նվիրում է հանձնարարված գործին:

1920 թ. ապրիլի 20-ին գոլիս և Յերևան՝ զեկուցում տալու Արմենկոմին և նոր հանձնարարություններ ստանալու:

Շուտով նորից վերագառնում է Ղարս և անցնում ապստամբության նախապարաստական անձիջական աշխատանքներին:

Բոլշևիկյան վճռականությամբ հարվածում ե բոլոր ոգորշունիսներին, պնդելով և անցկացնելով ապստամբության անցնելու տեսակետը: Ընտրվելով Ղարսի ուղարկան կամաց անձիջական կոմիտեին նախագահ, անսպառ յեւանդով ու վոգեվորությամբ աշնում է ապստամբության գլուխ:

Զայած իր յերիտասարդական հասակին՝ ըն գամինը 21 տարեկան՝ Ղուկասյանը փայլուն կերպով դեկավարում է ապստամբությունը: Խրախուսիչ ու համոզեցուցիչ ճառերով վոգեվորում է ապստամբ բանվորներին ու պինդորներին, անողոք թափով խրազանում է անվճռականներին, վախկունին և թույլերին:

Մայիսի 10-ին իշխանությունն անցնում է կոմունիստների ձեռքը:

Ապստամբության պարուությունից հետո մոտ 28—29 հոգու գլուխնացած, Ղուկասը յետ և քաշվում Ղարսից, ցանկանալով գնալ Ալեքսանդրապոլ՝ միանալու այնտեղի ապստամբներին: Հոգնած ու քաղցած ապստամբները մեծ գժվարությամբ ընկնում են ճամբար:

Մայրա գյուղի մոտ, նույն գյուղի խմբապետ Ղոչիբաշի տերտերի ձիավոր խումբը հարձակվում է ապստամբների վրա:

Սակայն հեղափոխական մարտիկ Ղուկասյանը կարողանում է հակառակական բուրժուատի խմբին ու նրանց փախուստի մատնել:

Մայիսի 14-ի առավոտը, ժամը 10 ին, ապստամբները հասնում էն Արդիո գյուղի ձորը և այնտեղ ջրազաներում փորձում են քիչ հանգստանալ Սակայն ապստամբները պաշարվուած են զաշնակցական խվերով: Ղուկասյանն առանց ընկճվելու անցնում է ապստամբների գլուխ ու սկսում է դիւճողել իրենցից անհամեմատ շատ գաղնակ ուժերին:

Սկսվում է տաք կոփի, վոր տելու և յերկու ժամ խլելով յերկու կողմից և վիրավորներ ու սպանվածներ:

Ղուկասյանը՝ ատելի թշնամուն դիմադրելու այդ կովում, մի անգամ ևս հանդես է բերում իր հեղափոխական մարտիկին վայել բոլոր գծերը:

Սակայն նա վիրավորվում է փորիգ ու, չնայած դրան, նորից շարու նակում դիմադրել զանակ բանդային մինչեւ այն ժամանակ, յերբ դաշնակ մառզերիստների մահացու գնդակներն անշնչացնում են հերոս մարտիկին:

Ղուկասյանի հետ միասին ընկնում են նաև ութ հոգի, մնացածների մի մասը գերի յե բռնվում, իսկ մյուս մասին հաջողվում է փախչել:

Ղուկասյանի և ընկերների դիակը հողին են հանձնում շըակա գյուղ գերի գյուղացիները:

Մարտունիսան Յեղոք

**Ծ**նվիլ և 1896 թ. Իջևանի շրջանի Քըղեղան գյուղում, հողագործի ընտանիքում: Սկզբնական կրթուցուն ստացել և դյուդում (Իջևանում և Վեղդանում): Ապա մտնում է Եղծիածնի ճեմարանը, վորոն ավարտելուց հետո, իմակերիսալիստական պատերազմի ժամանակ, 1915 թվին կանչվում և զինվորական ծառացության, վորտեղ մնում և մինչև 1917 թ.:

1917 թվին վերադառնում և գյուղ և աշխատում և վրապես ուսուցիչ մինչև 1920 թ., ասիստան ապստամբութիւնը՝ իր ուսուցչական աշխատանքի ընթացքում, Յենոքն ամերող որջան և տաճում և կոմունիստական լեռան դրւն, տեսնագին աշխատանք, վրապես Հայկոմկուսի այդ շրջանի աշխատանքները զեկափարող ընկերութիւն մեկուն

Նրա անմիջական ձեռներեցությամբ ե, վոր արջանի մի շարք գյուղերում կազմակերպվում են կոմունիստական ընդհատակա թիջները: Դեռ ևս այդ ժամանակ Յենոքը հայտնի լե դառնուո՞ դաշնամուշությանը, որան միքանի անգամ փորձում են բանաբանել, բայց չի հաջումու ի:

Մայթամբ առ բաստարկել, բայց չի հաջողվում:  
Մայթամբ ապատամբության ժամանակ իշխանի և Դիլիջանի ըրջան-  
ներում նա զառնում է ապատամբության գլխափոներից մեկը:

Ապստամբությունը գլխավոր ներից մեկը,  
պետական ռազմականը, գաղնակ հմրա-  
պետների հետ ունեցած ընդհարման ժամանակ՝ վիրափորփած լինելով և  
խուս տալ չկարողանալով ընկնում և նրանց ճանկը. և նրան ամօնավայրագ,  
աշենադաժան կերպով չարչարելոց հետո՝ գնդակահարում ին.

## ՄոհավելՅԱՆ ՄԱՐԳԻՍ

Ծնվել և հախկին Գանձակի դավառի Զայքենդ գլուղում, չքավոր զբուղացու ընտանիքում։ Հայրը հարեան Կաբադաղի գլուղում աշխատում եր փորպիս ջրաղացպան։ Սկզբնական կրթությունն ստացել է գլուղում, ապա Գորիսում և Թիֆլիսում։ Վորոշ ժամանակ զբաղվում է ուսուցչությամբ և ապա կանչվում ե բանակ՝ բանակում ձեռք և բերում սպայի աստիճան և լինելով «Սիրիրյան № 29 հրածիդ գնդում», ուղարկվում ե արևմտյան քրոնտ՝ հատկապես Մինսկ, վորտեղ նա յերկար ժամանակ մասնակցում ե կորիթներին։ Վո, պիս ապա, Մուսայելլանը ցարական բանակում ունեցել և լիներալ հակակառավարական տրամադրություններ։ Ցարական կառավարության անկումմից և դաշնակցական պետականության կազմավորումից հետո զալիս է Հայաստան և աշխատում է դաշնակցության բանակում, վարելով դաշնակցության «Վարդան Զորավար» դրահապատի հրամանատարի պաշտոնը։ Մի քանի տարի շարունակ աշխատելով դաշնակցության բանակում և իր աշքով տեսնելով դաշնակցական կառավարության իսկական դեմքն ու ելությունը, տեսնելով ազգամիջյան կոփիթերը և այլն, իսկական դեմքն ու ելությունը, տեսնելով ազգամիջյան կոփիթերը և այլն, վորպիս աշխատավորական մասսայի միջից զուրս յեկած տարրի, նրա մեջ վորպիս աշխատավորական մասսայի միջից զուրս յեկած տարրի, նրա մեջ առաջ և զալիս հիմնական բնկում և նա իրեն նետում ե բանվոր զասակարուացի մարտական կուսակցության՝ բոլըեկների շարքը, նվիրելով իրեն պբուտառական հեղափոխության մեծ զործին։

Ետարակաս հոգափոլության և պատմական ազգական գործությունների մասին պատմությունը կազմված է Ապստամբության նախորեցին և որերին, Մուսատելյանի զբահապատը պառնում և ապստամբների կենորոնը, Վորապես անվախ, համարձակ հեղադաշտում և ապստամբների կողմէից, ու գառնում և ապստամբության փոխական, խիզախ ու յեռանգուտն զործիչ, ու գառնում և ապստամբության գլխավորներից ու զեկավարներից մեկը, Ռազմհեղափոխական կոմիտեի գլխավորներից ու զեկավարներից մեկը, Ռազմհեղափոխական կոմիտեի կողմէից նշանակվում և ուղարձական զործիչ կոմիտար և ընդհանուր զորակումից հաջանակվում և ուղարձական զործիչ կոմիտար և ընդհանուր զորակումից հաջանակվում և մինչև վերը: Ապստամբության ճնշումից հետո Մուսայելյանը բանտարկվում և և գցվում Ալեքսանդր Ապստամբը անտեղից տեղափոխվում և Յերևանի բանտը և ողոսառարարի բանտը, այնտեղից տեղափոխվում և Յերևանի բանտը և ողոսառարի 14 ին (Գիշերը), Դարիքջանյանի և Ալլահվերդյանի հետ միասին, Յերևանից Քանաքեռ տանող ճանապարհի վրա զնղակահարվում և և դիակն աչընդում:

# ԱԼԵՔՍԵՅԵՎ ՎԱՍԻԼԻ ՎԱՍԻԼԻՅԵՎԻ

Ծնվել է 1896 թ. Դիլիճանում, աղքատ գյուղացու ընտանիքում:  
Ծնողները պարապում ենին հողագործությամբ: 1905 թվին մանում և զյուղական յեկեղեցական ծխական դպրոց և 1910 թվին ավատելով, անցնում է Յերևան ու սովորում Ուսուցչական Սեմինարիայում, վորոն ավարտում և 1916 թ.: Սեմինարիան ավարտելուց հետո Ալեքսեյիվը կանչվում է զինվորական ծառայության, վորտեղ նա անցնում է պրապարաչիկների դպրոցը և ապա ուղարկվում է թուրքական ֆրոնտը:

1918 թվին ֆրոնտից վերադառնում և Դիլիջան և հրաժարվում և ծառայել գաշնակցական կուսակցության բանակում:

1918 թվից մինչև 1920 թիվը Ալեքսեյեվը, վորպես գյուղական ուսուցիչ, աշխատում է Նադեժդինո և Սուխոյ-Ձանտան գյուղերում:

1920 թվի ապրիլ մալիս ամենաբարեն գնում և Դիլիջան և տեղի կոմիտեն կազմակերպության հետ միաս և աշխատում Դիլիջանում, նախապատրաստելով մարդիսյան ապաստիքությունը:

Ապստամբության ժամանակ լինելով Ռազմիկովի անդամ և շոարի նախագահ նա անմիջական ակտիվ մասնակցություն և ցուց տալիս ապստամբությանը, վորի պարտությունից հետո ցանկանում է խոյն տալ զաշ-նակցական տերրորից, սակայն, դեպի Վաբանցովիկա տանող ճանապարհին բռնվում ե և ուղարկվում Ղարաքիլիսաւի բանութ, վորտեղից և Վաղինակ Հովհաննիսիանի հետ տարփում ե Դիլիջանի բանտը:

Հունիսի 5-ին (1920 թ.) Ալեքսեյիվը և Վաղինակ Հովհաննիսիանը Դիլի-  
տանի բանտից տարվում են իբր թե հարցաքննութեան, և «հարցաքննու-  
թյունից» հետո՝ բանտ վերադառնալու ժամանակ, բանտի մոտ գտնվող կա-  
նուրջի վրա զնդակահարվում են այն պրովաւտիոն պատճառաբանությամբ,  
որ իբր թե նրանք (Ալեքսեյիվը և Հովհաննիյանը) ցանկանում ենին մաս-  
ել:

Ըստ Ալեքսեյիկը յերկար ժամանակ աշխատել և չայստանի կոմկուակցության անկեղալ կազմակերպությունների մեջ:

ՀԱՐԻՄԶԱՆՅԱՆ ԲԱԳՐԱ

**Ծ**նվել և 1890 թ. նախկին Սուրմալույի գավառի Բահաուլու գլուղում՝ Ազգբնական կրթությունն ստացել և գլուղում, ապա իգդիրի քաղաքային դպրոցում, վորը վերջացնելուց հետո՝ 1908 թ. նշանակվում և Տավշանղլաղ գյուղի դպրոցի ուսուցիչ, Նոյյն այդ պաշտոնով նա աշխատում և մի շարք այլ գլուղերում և այդպիս մինչև 1915 թ. 1915 թ. սեպտեմբերին ուսուցչական պաշտոնից հեռացվում և վորպիս «անհուսալի», հեղափոխական, «հակակառավարական» տարր:

Փետրվարյան հեղափոխությունից (1917) հետո Ղարիբջանյանն անց-  
նում է ակտիվ հեղափոխական գործնելության:

Աշխատում ե վորպես բոլեիկ' Ալեքսանդրապում: Բնարվում ե քաղաքալին դռւմալի ձայնավոր: Այնտեղ նա կուսակցական մեծ աշխատանքներ ե տանում մինչև իր կյանքի վերջին որերը: Առանձնապես վճռական կոիվ եթ մղում դաշնակցության դեմ:

Դարիքանյանն աչքի լեռ ընկնում իր տեսական, մարգսիստական պատրաստականությամբ. նա ունի մի շարք ձևուագիր և տպագիր մարգսիստական լուրջ աշխատությունների:

Մայիսյան ապստամբություններին լեռանդուն և ակտիվ մասնակցություն ե ցույց տալիս։ Ապստամբության ճնշումից հետո ձերբակալվում ե ու ճպիում բանտ։

1920 թ. Ալեքսանդրապոլի ղաշնակցական արտակարգ դատարբանի կողմից նրան ճանավան են դատապարտում, հետո, ներում շնորհելու պատճառաբանությամբ, տեղափոխում են Յերևանի բանտ: Բայց ոգոստոսի 14-ի գիշերը նրան Ալլահվերդյանի և Մուսայելյանի հետ միասին տանում են Քաղաքուի տակ գնդակահարում, իսկ դիակն ալբում:

## ՍԵՎՈՅԱՆ ՅԵԳՈՐ

**Ծ**նվել և 1885 թ. Զանգեղուրի Քարահունջ գյուղում, հետևնի ընտանիքում: Սկզբնական կրթությունն ստացել և գյուղի ծխական դպրոցում: Դեռևս յերիտասարդ հասակում թողնում և գյուղը և դնում Բագու, վորտեղ սկզբում աշխատում և գործվածքալին և ապա՝ նավթալին արդյունաբերության մեջ, ուր և ակտիվ կերպով մասնակցում և Բագվի բանվորության հեղափոխական յելութերին ու գործադունակերին:

1918 թվին մտնում և կոմ. կուսակցության շարքերը և դառնում Բագվի հերոսական կոմունալի մարտիկներից մեկը, պայքարելով կոմունալի համար մինչև վերջը, կոմունալի անկումից հետո անլեզուաշխատում և մուսաֆաթական Աղբբեջանում, կրելով ամեն տեսակ նեղություններ ու հաւածանքներ: Մուսաֆաթիստների հետապնդումներից ազատվելու համար, 1919 թ. գալիս և Ալեքսանդրապոլ և աշխատում դեպում վորպես տռակար: Այստեղ Սեվլյանին հաջողվում և մյուս ընկերների հետ միասին ընդհատակյա բոլցիկան բջիջը դնել ամուր հիմքերի վրա և հաջող աշխատանքներ տանել բանվորության մեջ: Շուտով Սեվլյանը, վորպես բոլցեկի, հայտնաբերվում և դաշնակների կողմից և 1920 թ. հունվար ամսին մի քանի ուրիշ ընկերների հետ բանտարկվում են: Սակայն, դեպովի բանվորության միամուռ բողոքի շնորհիվ, դաշնակցական կառավարությունն ստիպված ելինում նրան ազատ արձակել, վորը և հնարավորությունն և տալիս Սեվլյանին նորից անցնել կուսակցական աշխատանքի:

Մայիսյան ցուլցերին և ապստամբությանը ամենաակտիվ մասնակցություն և ունենում, ընկերների հետ կազմակերպում և կարմիր գվարդիա ուղեկավարում այն:

Ապստամբության պարտությունից հետո, Մայիսի 14-ին, ձերբակալվում և ձգվում եք բանտ, իսկ հունիսի 4-ին Փանյանի և Պրիբիլու հետ միասին գնդակահարվում եք դաշնակցական կառավարության կողմից:

## ԲԱԴԻԿՅԱՆ ԲԱԴԻԿ

**Ծ**նվել և 1892 թ. Նոր-Բայազեղում: Սկզբնական կրթությունն ստացել և Նոր-Բայազեղի քաղաքացին դպրոցում և, հնարավորություն չունենալով այլևս ուսումը շարունակել, սկսում է անմիջապես զբաղվել ուսուցչությամբ: Դեռևս 1905 թվին մտնում է Ռ. Ս. Դ. Կ. մեջ և հենց այդ ժամանակից ել ընկեր Հովհաննես Սարուխանյանի հետ միասին սկսում է ակտիվ կուսակցական աշխատանքներ տանել Նոր-Բայազեղում:

1914 թ. իմպերիալիստական պատերազմի ժամանակ յենթարկվում և զորակոչի և ուղարկվում զինվորական ծառայության ժիտումից քաղաքը, վորտեղից և ուղարկվում եք ֆրոնո՞ Կարպատները, մնալով ուղմանակատում ամբողջ Յ տարի:

1917 թ. վերադառնալով Նոր-Բայազեղ, Բաղդիկյանն իսկույն անցնում և աշխատանքի: ընկերների հետ միասին կազմակերպում և կոմ. կուս. բջիջ և սկսում է ակտիվ պայքար մղել ինչպես դաշնակցության, նույնպես և մենակեների ու սպեցիֆիկների գեմ:

Սակայն 1918 թ. դաշնակցությունը նրան կարողանում է բռնի ֆրոնտ ուղարկել, վորտեղ Բաղդիկյանը տեսնդորեն բոլցեկիցան աշխատանք և տանում:

1918 թ. հիշանդության պատճառով վերադառնում և Նոր-Բայազեղը իսկ 1920 թ. սկզբին նորից ստանձնում և ուսուցչական պաշտոն և վերսկը 1920 թ. սկզբին նորից ստանձնում և ուսուցչական պաշտոն և վերսկը: Հենց այդ ժամանակ գիլյանը և Սարուխանյանը ընտրվում են Հայաստանի կոմկուսակցության 1-ին կոնֆերանսի պատգամավորներ՝ Նոր-Բայազեղի կուսկազմակերպության կողմից:

Մայիսյան ապստամբության ժամանակ ղեկավար և ակտիվ աշխատանքներ և տանում: Ապստամբության ճնշվելուց հետո, հիշանդ լինելու պատճառվ, նա իր ամբողջ ընտանիքով բանտարկվում եր, սակայն, չնայած նրան անտեղական հիվանդության, դաշնակցական խմբապետ Համազասպը՝ նրան անտեղական հեղանքների յի յենթարկում և 1920 թ. սեպտեմբերին Յելենովկայից յերկու վերստ հեռավորության վրա, դաշնական պատգամար գնդակահարում են:

## ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐՏԱՀԵԿ

**Ծ**նվել և Աշտարակի շբջանի Կարբի գյուղում, նահապետական ընտանիքում. 1895 թվին մտնում և աշտարակի լերկդասյան տարբական ղղպացը և 1900 թ. տեղափոխվում և Յերևանի ուսուցչական սեմինարիան: 1905 թ. ավարտելով վերջինս՝ անմիջապես նշանակվում և Դարձագլազդի Այնազուր գյուղում ուսուցիչ: 1908 թ. Նրան աշջողվում և անցնել արտասահման: Ծեցարիա, վորտեղ մեծ դժվարություններից հետո կարողանում և ընդունվել Ժնեվի համալսարանը, սովորում և այնտեղ մինչև 1911 թիվը: Դաշնակցական կուսակցության մեջ լեզել և մինչև իր կյանքի վերջին տարին:

Սակայն դաշնակցական կուսակցության պետականության շրջանը (1918-1920 թ. թ.) չեր կարող հիմնական բեկում առաջ չըերել Մելքոնյանի՝ աշխատավորության ծոցից գուրս լեկած այդ ընկերոջ մեջ։ Դաշնակցության վողջ հականեղափոխական ռեակցիոն դեմքը, եյութիւնն ամենից ալելի ցայտուն արտահայտվեց ահա հենց այս շրջանում, յերբ իր ամբողջ ցայտունությամբ, առանց ծածկելու կիրառվում եր բուրժուատ-կուլակային, կալվածատիրական վողջ սոցիալ-անտեսական գասակարգային քաղաքականությունը, յերբ տեղի ելին ունենում հայ բուրժուաների գրպանների համար մղվող ազգամիջան կոտրածները, ջարդերը և մյուս կողմից ուժեղանում եր բանվորական, աշխատավորական մասսաների անսակելի շահագործումը։

861. ահա ալսպիսի պայմաններում բնական եր տեսնել, թե ինչպես Մելքոնյանը կտրում ե իր բոլոր կապերը զաշնակցութիւնից և մտնում հեղափոխական պրոլետարիատի կուսակցության մեջ:

1920 թ. վերջի ամիսներին Մելքոնյանն անվախ ու համարձակ կոփվ ե սկսում դաշնակցական կուսակցության ու նրա իշխանության դեմ, մեր կացնելով նրա դասակարգակին դեմքը: 1920 թ. սկզբներին Աշտարակի շրջանում նա հիմք ե դնում «Գյուղացիական Միությանը», նրա ջանքերով Հայաստանում կազմակերպվում են «Գյուղացիական Միություններ», ապա յերկանում հրատարակվում ե «Գյուղացիության Զայն» թերթը՝ իր խմբագրությամբ: Ի պատճությամբ ու թշնամությամբ գեպի զաշնակցությունը՝ Մայիսյան հերոսական որերին՝ Հայաստանի բանվորության և աշխատավորական լայն զանգվածների առաջին մասսայական ապստամբության ժամանակ՝ նա իրեն նետում ե դասակարգակին այդ հերոսական պայքարի մեջ, գրավելով ապստամբության և նրա նախապատրաստման մեջ զեկավարող գիրքերից մեկը: Ապր

տամբության ժամանակ նա ընտրվում է Ուաղմհեղկոմի կազմի մեջ ու Արմենկոմի կողմից ուղարկվում է Ալեքսանդրապոլ՝ ապստամբութիունը դեկավարելու համար:

Դաշնակցությունը որենքից դուրս և ազգի դավաճան» ե հայուարտ-ը ում նրան: Նրան ձերբակալելու համար զլխագին և նշանակում:

Ապստամբության պարտությունից հետո դաշնակցական դաժան տեղը ըստ կուսափելու համար՝ Մելքոնյանն Ալեքսանդրապոլից հեռանում և իրենց ըստ կուսափելու նպատակով՝ Սակայն իրենց հարեւան Ոհանագուղը, այնտեղ թագնվելու նպատակով։ Սակայն իրենց հարեւան Ոհանագուղը գուղում, տեղի կուլակացին խմբակների կողմից բռնվում և և անասելի վանք գուղում, տեղի կուլակացին խմբակների կողմից բռնվում և և անասելի ծեծի ու բռնությունների լենթարկվում, վորից հետո տեղափոխվում և Աշծեծի ու բռնությունների լենթարկվում, վորից հետո ծաղրանքի լենթարկվելով՝ ուղարկվում և Եջմիածնի բանտը։

Այստեղից ել, միլիցապետ Համազառպյանի կարգադրությամբ բանալից դուրս են բերում իրը թե Յերևան տեղափոխելու համար, սակայն ճանապարհին, նախորոք կազմակերպված դաշնակցական խմբակետները, պարլամենտի յերկու անդամների ներկայությամբ, գնդակահարում են և միայն դիակը հաղնում Յերևան։

## ՓԱՆՅԱՆ ԱՐՇԱԼՈՒՅՄ

Ծնվել է 1892 թ. Շամախում: Սովորել է Մոսկվայի Լազարյան ճեմարանում, հետագայում՝ Մոսկվայի համալսարանի, բժշկական ֆակուլտետում: Մասնակցել է իմպերիալիստական պատերազմին վորպես բժիշկ: Յեղել է լըվովի, Կարպատների քրոնտում: Վիրավորվել է գլխից: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո նա գործում է Մոսկվայում: Այդ ժամանակ իր հայացքներով նա մոտենում եր անարխիստ-կոմունիստներին:

Հեղափոխության շարժումներին նա մասնակցել է դեռ դպրոցական հասակից՝ Մոսկվայում, Մոսկվայի համալսարանի, ուսանողական շարժումներին, վորք համար նրան դուրս են անում բժշկական ֆակուլտետից: Կոմունիստական կոսակցության մեջ և սկսած 1918 թվից:

Ժանկանալով ծնողներին տեսնել, նա անցնում է Թուրքեստան և ձերբակալությունից խուսափելու համար մտնում և Ասխաբադի հիվանդանոցը՝ բժիշկի պաշտոնով, վորտեղ և կազմակերպում և կոմունիստական բջիջ: Այսպատճառով նրան ձերբակալում են, սակայն հաջողվում է փախչել և մեծ չարչարանքներից հետո անցնում է Թիֆլիս:

Այդ ժամանակ Հայաստանում զարգանում ելին հեղափոխական շարժումները, Փանյանը շուտով Ցերկարային կոմիտեից առաջարկ և ստանում մեկնել Հայաստան՝ ընդհատակյա աշխատանքի:

Հեղափոխական շարժումների բուռն վերելքի ժամանակ՝ Փանյանն աշխատում և Ալեքսանդրապոլի շրջանում, իսկ Մայիսիան ապստամբությունների ժամանակ՝ Քավթարլի գուղում:

Շուտով դառնում է այդ շրջանի ամենաակտիվ գործիչը:

Ապստամբության ժամանակ շրջանում ղեկավար դեր է խաղում, վորքիս ուղղմանական կոմիտեի անդամ և նախարար:

Ապստամբության պարտությունից հետո ձերբակալվում և բանտարկվում է Ալեքսանդրապոլի բանտում: Այդադեպ նա հիվանդանում և տիֆով:

Հնչպես ցույց են տալիս գործիքը և ականատեսների պատմածները, Փանյանն իրեն պահում է վորպես կայուն և համոզված բոլցիկ: Արտակարգ գատարանը, ինչպես և նրա դատախազ բժիշկ Բաղդասարյանը, նրան մեղադրում են «հայրենիքի դավաճանության» մեջ:

1920 թ. հունիսի 4-ին 40 աստիճանի տաքության մեջ, Փանյանին, Ցեղոր Սեպուանի ու Պրիբիլսկու հետ միասին, դաշնակ դահիճները բժ. Բաղդասարյանի անձնական ղեկավարությամբ, բանտից դուրս են բերում և քաղաքից դուրս հրեական գերեզմանատան մոտ գնդակահարում են:

Պետհրատի տպարան  
Գլավիս 7507 (բ.)  
Հրատարակ. 2350  
Պատվիր 2858  
Տիրած 1000



Սրբագրեց՝ Ո՞ն, ԳԱՍՏՐՉԵԱՆ

Հանձնված և արտադրության—5/XI 32 ստորագրված և տպագրելու 20/X 32 թ.

807

Ф 163 А

Лист

807



МАЙСКОЕ ВОССТАНИЕ

АЛЬБОМ

ГИЗ ССР АРМЕНИЯ-ЭРИВАНЬ





12.098

